

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Կուրաչի Հանրապետության Կառավարության միջև առևտրատնտեսական համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Կուրաչի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր, ձգտելով հավասարության և փոխշահավետության հիման վրա զարգացնել երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունները, ցանկանալով առևտրատնտեսական փոխադարձ հարաբերությունների զարգացման համար ստեղծել պայմանագրափրավական հիմք և բարենպաստ պայմաններ,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը հաստատում են իրենց պատրաստակամությունը՝ խթանել և զարգացնել ապրանքների և ծառայությունների փոխանակումը, ինչպես նաև հայկական և կուրաչական ձեռնարկությունների միջև տնտեսական համագործակցությունը՝ երկու երկրների գործող օրենսդրություններին և համաշխարհային առևտրում ընդունված սկզբունքներին և փորձին համաձայն:

Հոդված 2

Պայմանավորվող կողմերը ապրանքների և ծառայությունների փոխանակման, ինչպես նաև տնտեսական հարաբերությունների այլ ձևերին առնչվող բոլոր հարցերում հաշվի կառնեն Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) նորմերը և սկզբունքները, ինչպես նաև սույն Համաձայնագրի դրույթները և, համաձայն դրանց, փոխադարձ առևտրում միմյանց կտրամադրեն առավել բարենպաստ ազգի ռեժիմ խտրականության բացառման և հավասար հնարավորությունների պայմաններում:

Առավել բարենպաստ ազգի ռեժիմը կկիրառվի բոլոր այն դեպքերում, որոնք կվերաբերեն ներմուծման և արտահանման թույլտվությանը, մաքսատուրքերին և վճարումներին, հյուպատոսական գանձումներին և այլ գանձումներին ու հարկերին, որոնք կիրառվում են կամ կարող են կիրառվել ապրանքների ներմուծման, արտահանման, տարանցման, պահեստավորման, դրանց գրանցման, ինչպես նաև մաքսային կանոնների և ընթացակարգերի նկատմամբ:

Պայմանավորվող կողմերը համաձայնում են միմյանց տրամադրել առավել բարենպաստ ազգի ռեժիմ նաև ապրանքների փոխադրման հետ կապված բոլոր հարցերում և, իրենց երկրների օրենսդրություններին և կարգավորումներին համապատասխան, կաջակցեն իրենց տարածքներով մյուս Պայմանավորվող կողմի տարածում արտադրված ապրանքները երրորդ երկրներ և երրորդ երկրների տարածքում արտադրված ապրանքները որևէ Պայմանավորվող կողմի տարածք ազատ տարանցելուն:

Հոդված 3

Առավել բարենպաստ ազգի ռեժիմը չի տարածվում այն արտոնությունների և առավելությունների վրա, որոնք՝

- բխում են Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի մաքսային միություններում, ազատ առևտրի գոտիներում կամ տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի այլ ձևերում մասնակցությունից,
- Պայմանավորվող կողմերից որևէ մեկը տրամադրել է կամ կտրամադրի հարևան երկրներին՝ սահմանամերձ առևտուրը դյուրացնելու նպատակով,
- Պայմանավորվող կողմերը միջազգային պայմանագրերի հիման վրա տրամադրել են կամ կտրամադրեն զարգացող երկրներին:

Հոդված 4

Հայաստանի Հանրապետության և Կուբայի Հանրապետության կազմակերպությունների միջև ապրանքաշրջանառությունը և ծառայությունների մատուցումը իրականացվում է կոնտրակտների կամ այլ յուրահատուկ փաստաթղթերի հիման վրա՝ երկու երկրներում գործող օրենսդրություններին և համաշխարհային պրակտիկայում ընդունված առևտրի ձևերին համաձայն:

Եթե կոնտրակտներում ակնհայտ նշված չլինի այլ բան, Պայմանավորվող կողմերի կազմակերպությունները երկկողմ առևտրում կկիրառեն ИНКОТЕРМС-ում ընդգրկված գնման և փոխադրման պայմանները:

Հոդված 5

Առքուվաճառքի կոնտրակտներում, որոնք կկնքվեն Պայմանավորվող կողմերի կազմակերպությունների միջև ապրանքների մատակարարման և ծառայությունների ցուցաբերման համար, գների սահմանումը կիրականացվի համապատասխան տեխնիկական մակարդակի և որակի ապրանքների ու ծառայությունների հիմնական համաշխարհային շուկաների գործող գներին համապատասխան:

Հոդված 6

Հայկական և կուբայական կազմակերպությունների միջև ապրանքների կամ ծառայությունների մատակարարման կոնտրակտներից բխող վճարումները կիրականացվեն ազատ փոխարկելի արտարժույթով, որի վերաբերյալ կպայմանավորվեն Կողմերը, իսկ վճարման պայմանները կնշվեն համապատասխան պայմանագրերում:

Կողմերի լիազոր բանկերը անհրաժեշտության դեպքում կհաստատեն տեխնիկական բանկային ընթացակարգ՝ սույն Համաձայնագրից բխող գործարքները ապահովելու համար:

Հոդված 7

Պայմանավորվող կողմերը, իրենց երկրների օրենսդրություններին համապատասխան, կաջակցեն փոխադարձ առևտրի տարբեր ձևերի, արդյունաբերական կոոպերացիայի, տնտեսական միությունների և համատեղ ձեռնարկությունների, ինչպես նաև առևտրատնտեսական համագործակցության զարգացմանը:

Պայմանավորվող կողմերը կցուցաբերեն անհրաժեշտ աջակցություն յուրաքանչյուր Կողմի տարածքում ծագող արտոնագրերը, առևտրային դրոշմանիշները, կոմերցիոն անվանումների ձևակերպումը պաշտպանող և իրենց երկրում արդյունաբերական սեփականության համապատասխան ռեգիստրում գրանցելու համար:

Հոդված 8

Պայմանավորվող կողմերը կօժանդակեն իրենց տարածքներում կառավարական առևտրային ներկայացուցչությունների, ինչպես նաև առևտրատնտեսական համագործակցությանն առնչվող ֆիրմաների, ընկերությունների, բանկային և այլ հաստատությունների ներկայացուցչությունների և մասնաճյուղերի բացմանը և գործունեությանը՝ համաձայն երկու երկրների գործող օրենսդրությունների:

Հոդված 9

Պայմանավորվող կողմերը կցուցաբերեն փոխադարձ անհրաժեշտ աջակցություն իրենց երկրներում տոնավաճառների, ցուցահանդեսների, համաժողովների և երկկողմ առևտուրը խթանող այլ միջոցառումների կազմակերպման համար՝ երկու երկրների օրենսդրությունների համաձայն:

Հոդված 10

Պայմանավորվող կողմերը, իրենց երկրներում գործող օրենսդրությունների համաձայն, թույլ կտան հետևյալ ապրանքների ներմուծումն ու արտահանումը առանց հարկերի ու մաքսավճարի և այլ տեսակի գանձումների.

- նմուշային առարկաներ և պրակներ, զովագրային տեղեկագրեր և ուրվագրեր,
- պարտավորությունների և երաշխիքների կատարման նպատակով անվճար առաքվող մասեր,
- ժամանակավոր կամ մշտական գործող տոնավաճառներում և ցուցահանդեսներում ոչ վաճառքի նպատակով ներկայացվող ապրանքներ,
- ուրիշ ապրանքի փոխարեն ներմուծված ապրանքը՝ փոխարինված ապրանքը երկրից արտահանելու պայմանով,
- միջազգային առևտրում օգտագործվող հատուկ բեռնարկեր և փաթեթավորումներ, որոնք ներմուծվում են բեռնավորման և երկրից արտահանվելու նպատակով,
- ապրանքներ, գործիքներ, նյութեր և այլ գործիքակազմ՝ ժամանակավոր ներմուծված, փորձերի, փորձարկումների, վերանորոգման աշխատանքների, մշակման և պատրաստման համար՝ վերադարձի պայմանով,
- առարկաներ, գործիքներ և հաստոցներ՝ նախատեսված մոնտաժային աշխատանքների և առևտրատնտեսական ու գիտատեխնիկական համագործակցության համար՝ վերադարձման պայմանով:

Նման բնույթի արտահանման և ներմուծման ժամկետները կսահմանվեն՝ կախված այն նպատակներից, որոնց համար նախատեսված են վերոհիշյալ ապրանքները և առարկաները:

Հոդված 11

Պայմանավորվող կողմերը կձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ խուսափելու համար իրենց տարածքներ ներմուծելու մյուս Պայմանավորվող կողմի բնական ծագում ունեցող ապրանքները կամ արդյունաբերական արտադրանքը, որոնք, չնայած ապրանքային նշանի, անվանման և դրոշմանիշների և այլ նշումների, կեղծված են կամ չեն համապատասխանում ծագմանը կամ ապրանքի որակին՝ Պայմանավորվող կողմերի օրենսդրությունների և վերոհիշյալի վերաբերյալ կնքված միջազգային համաձայնագրերի համաձայն:

Հոդված 12

Սույն Համաձայնագրի համաձայն հայկական և կուբայական տնտեսավարող կազմակերպությունների ներմուծած ապրանքները չեն կարող վերաարտահանվել երրորդ երկրներ առանց ներմուծողի գրավոր համաձայնության:

Պայմանավորվող կողմերը կձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ, որպեսզի ապահովեն ապրանքաշրջանառության պաշտպանությունը իրենց տարածքներում ցանկացած տեսակի անբարեխիղճ մրցակցությունից՝ իրենց երկրների օրենսդրությունների և վերոհիշյալի վերաբերյալ իրենց միջև կնքված միջազգային համաձայնագրերի պահպանմամբ:

Հոդված 13

Պայմանավորվող կողմերը սույն համաձայնագրի գործունեությունը ապահովելու, անհրաժեշտ հանձնարարականների մշակման, խորհրդակցությունների անցկացման և փոխադարձ առևտրատնտեսական համագործակցության հետագա զարգացման նպատակով կստեղծեն հայ-կուբայական առևտրատնտեսական միջկառավարական համատեղ հանձնաժողով, որը հաջորդաբար կգումարվի Երևանում կամ Հավանայում:

Հանձնաժողովի լիազորությունները, գործառույթները, կազմակերպչական մանրամասները և հստակ խնդիրները կսահմանվեն համատեղ հանձնաժողովի առաջին նիստի ժամանակ՝ համապատասխան արձանագրությամբ:

Հոդված 14

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման, կիրառման և կատարման ընթացքում ծագած վեճերը կլուծվեն Պայմանավորվող կողմերի միջև՝ բանակցությունների միջոցով:

Հոդված 15

Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոխոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն համապատասխան փաստաթղթով, որը ուժի մեջ կմտնի սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված ընթացակարգով:

Հոդված 16

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ներպետական իրավական ընթացակարգերի ավարտման մասին վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից:

Սույն Համաձայնագիրը կգործի 5 տարի ժամկետով և այդ ժամկետի ավարտից հետո ինքնաբերաբար կերկարաձգվի մեկամյա ժամանակահատվածներով, եթե Համաձայնագրի ժամկետը լրանալուց վեց ամիս առաջ Պայմանավորվող կողմերից մեկը մյուս Պայմանավորվող կողմին դիվանագիտական ուղիներով չտեղեկացնի դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Այն գործարքների նկատմամբ, որոնք կնքվել, բայց չեն կատարվել Համաձայնագրի գործողության ժամկետի ընթացքում, սույն Համաձայնագրի բոլոր դրույթները կշարունակեն գործել մինչև այդ գործարքների ավարտը:

Կատարված է Երևան քաղաքում 2003թ. մարտի 26-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, իսպաներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման ժամանակ ծագած տարաձայնությունների դեպքում նախապատվությունը կտրվի ռուսերեն տարբերակին:

***Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2004 թվականի սեպտեմբերի 20-ին:**